

ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ՓԱՍՏԱՐԿՄԱՆ ԴԵՏԵՐՄԻՆԱՑԻԱՑԻ ԼԵՆԻՆՅԱՆ ԸՄԲՈՒՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Վ. Խ. ՄԻՆԱՍՅԱՆ

Հասարակական կյանքի հոգևոր ողջ «կիսաշրջանի» ըմբռնման պատմամատերիալիստական դետերմինացիայի միջուկն այն միտքն է, թե մարդկանց կողմից երբևիցե բաժանվող կամ նըրանց բաժանող ցանկացած գաղափարների, պատկերացումների առաջացման ու փոփոխման խորը աղբյուրը նրանց սոցիալական գործունեության օբյեկտիվ, նյութական պայմաններն է: Մարքսիզմի դասակարգների առաջադրած և համակողմանիորեն հիմնավորված հոգևոր երևույթների բացահայտման դետերմինիստական այդ մոտեցումը ամուր հող է եղել նրանց համար՝ մինչև այդ մարդկային պատմության մեջ անբաժանորեն իշխող իդեալիստական հայացքների հաղթահարման և այս բնագավառում փիլիսոփայական մատերիալիզմի հաստատման գործում: Հասարակական գիտակցության երևույթների մեկնաբանման մատերիալիստական դետերմինացիայի սկզբունքը ձևակերպելով որպես իրենց գաղափարական հավատո հանգանակ, Վ. Մարքսը և Ֆ. Էնգելսը գրում էին. «...Մեզ համար ելակետ են իսկապես գործուն մարդիկ, և նրանց իրական կենսական պրոցեսն՝ ց մենք բխեցնում ենք նաև այդ կենսական պրոցեսի գաղափարախոսական արտացոլումների և արձագանքների զարգացումը: Նույնիսկ մշուշապատ գոյացությունները մարդկանց ուղեղում, դրանք էլ նրանց նյութական կենսական պրոցեսի անհրաժեշտ արգասիքները, յուրատեսակ գոլորշիացումներ են, մի պրոցես, որը կարող է հաստատվել էմպիրիկորեն և կապված է նյութական նախադրյալների հետ: Այսպիսով, բարոյականությունը, կրոնը, մետաֆիզիկական և գաղափարախոսության այլ տեսակները և դրանց համապատասխանող գիտակցության ձևերը կորցնում են ինքնուրույնության երևութականությունը: Նրանք պատմություն չունեն, նրանք զարգացում չունեն. իրենց նյութական արտադրությունը և իրենց նյութական հաղորդակցումը զարգացնող մարդիկ իրենց այդ իրականության հետ միասին փոխում են նաև իրենց մտածողությունը և իրենց մտածողության արգասիքները»¹:

Անցյալի և ժամանակակից մտածողների տեսական (այդ թվում՝ փիլիսոփայական) հայացքների վերլուծության և քննադատական մշակման գործընթացում Վ. Ի. Լենինն իր ստեղծագործություններում անկոփոխ առաջնորդվում է վերոհիշյալ մեթոդաբանական սկզբունքով, տալով դրա ստեղծագործական կիրառման և զարգացման անխոխարինելի նմուշներ: Գաղափարախոսական երևույթների և գործընթացների բացատրման մեջ մատերիալիստական դետերմինացիայի այդ սկզբունքը իր բազմակողմանի արտահայտությունն է գտել նաև լենինյան փիլիսոփայական փաստարկման մեջ: Այն բանից կախված, թե Վ. Ի. Լենինի փաստարկումը կոնկրետ դեպքում ում դեմ էր ուղղված՝ այս կամ այն համադրությի ժխտմանը, թե որևէ պրոբլեմի մարքսիստական լուծման պոզիտիվ հիմնավորմանը, այդ սկզբունքը նրա կողմից փաստարկման ընթացակարգերի իրականացման մեջ հանդես է գալիս իր տարբեր եզրերով: Առայժմ վերանայով այդ տարբերություններից, դետերմինիզմի նման սկզբունքի ընդհանուր էությունը հետազոտվող բնագավառում կարելի է արտահայտել հետևյալ կերպ. դա մի սկզբունք է, որը պարտադրում է վեր հանել ցանկացած (այդ թվում՝ փիլիսոփայական) գաղափարական կազմավորումների ծագման և գործառնության սոցիալական դետերմինանտները:

Փիլիսոփայական օբյեկտիբի (և, առհասարակ, ամեն մի տեսակ օբյեկտիբի) սոցիալական դետերմինացվածության մասին գաղափարը կարելի է մեկնաբանել երկակի՝ լայն և նեղ, իմաստով: Առաջին դեպքում փիլիսոփայական համադրությունների և գաղափարների սոցիալական դետերմինանտներ ասելով պետք է հասկանալ պատմականորեն կոնկրետ հասարակական օրգանիզմի կենսագործունեության օբյեկտիվ պայմանների ողջ միագումարը, որի շրջանակներում ձևակերպվել և գոյացել են տվյալ գաղափարներն ու համադրությունները, պայմաններ, որոնք բնութագրում են տվյալ հասարակության մեջ մարդկանց միջև գործող տնտեսական, քաղաքա-

¹ Վ. Մարքս, Ֆ. Էնգելս, Երկեր, հ. 3, Երևան, 1987, էջ 26—27:

կան, իրավական, բարոյաինոգեբանական և այլ հարաբերությունները, ինչպես նաև ցույց են տալիս այդ հասարակության նյութատեխնիկական, գիտական և մշակութային զարգացման մակարդակը²: Հասկանալի է, որ «սոցիալականի» նման ըմբռնումն այլ բան չի նշանակում, քան այն փաստի արձանագրումը, որ այս էպիտետը վերաբերում է հասարակությանը, հասարակական կյանքին: Փիլիսոփայական իմացության և գիտելիքի սոցիալական դետերմինացվածության «այն իմաստով» ըմբռնման միտքը հավասարագոր է այն գաղափարին, թե փիլիսոփայությունն իրենից ներկայացնում է հասարակական երևույթ, և ցանկացած փիլիսոփայական ուսմունք ոչ թե առանձին անհատի մտավոր կամայականության արդյունք է, այլ այն օբյեկտիվ հասարակական միջավայրի արդյունքն է, որի շրջանակներում ապրում և ստեղծագործում է տվյալ մտածողը³:

Լենինյան փիլիսոփայական փաստարկման մեջ փիլիսոփայական գիտելիքի սոցիալական դետերմինացիայի նման ըմբռնումը իրացվում է, մասնավորապես, զանազան տեսական գաղափարների ու պատկերացումների գնահատման կոնկրետ-պատմական մոտեցման ձևով, որը ենթադրում է այդ գաղափարների ու պատկերացումների ուսումնասիրությունը իրականացնել դրանք ծնող սոցիալ-պատմական պայմանների կոնտեքստում: Փիլիսոփայական գիտելիքի սոցիալական պայմանավորվածության նկարագրված լայն մեկնաբանության հետևողական իրականացումը տակավին չի երաշխավորում մատերիալիստական դետերմինացիայի սկզբունքը ուսումնասիրվող բնագավառում: Չէ՞ որ այդպիսի ըմբռնման պարագայում «սոցիալական դետերմինանտ» հասկացության մեջ կարող են ընդգրկվել ոչ միայն նյութական, այլև հոգևոր-մշակութային գործոններ: Այնպես որ, փիլիսոփայական գաղափարների սոցիալական պայմանավորվածության մասին գաղափարը որպես այդպիսին կարող է ընդունելի լինել ինչպես մատերիալիստական, այնպես էլ պոզիտիվիստական մեթոդաբանության կողմնակիցներից, որը վերջիններին գործերում հանդես է գալիս հանրահայտ «գործոնների տեսության» ձևով⁴:

Պատժա-մատերիալիստական դետերմինացիայի սկզբունքը մարդկային իմացության (ներառյալ և փիլիսոփայական իմացությունը) սոցիալական դետերմինացվածության գաղափարի հետ սերտորեն առնչվում է միայն այն դեպքում, երբ «սոցիալական» էպիտետը մեկնաբանվեց ավելի նեղ, իրեն յուրահատուկ իմաստով, այսինքն այնպես, ինչպես այն ներկայացնում է «հասարակության սոցիալական կառուցվածք» բառակապակցություն-հասկացության մեջ: Այլ կերպ ասած, այդ դեպքում մարդկանց մտավոր գործունեության արդյունքների և գործընթացների սոցիալական դետերմինանտներ ասելով պետք է հասկանալ ոչ թե տվյալ հասարակության ողջ կյանքը բնութագրող օբյեկտիվ պայմանների լրիվ միագումարը, այլ միայն այն պայմանները, որոնք կապված են նույն հասարակական օրգանիզմի սահմաններում գոյություն ունեցող մարդկանց տարբերակող այս կամ այն դասակարգերի և ենթադասակարգային խմբերի պատկանելու հատկանիշով: Սոցիալական դետերմինանտների այս իմաստով վերհանումը նշանակում է հաստատել այն դետերմինացիոն կապերը, որոնք առկա են այդ գաղափարների թվան-

² Փիլիսոփայական գիտելիքի և իմացության տարբեր կարգի սոցիալական գործոններով դետերմինացված լինելու այդպիսի լայն պլանով շննարկումը առկա է խորհրդային հեղինակների մի շարք աշխատություններում: Տե՛ս, օրինակ, **Н. В. Мотрошилова**. Познание и общество, М., 1969, էջ 3—17; **В. Г. Иванов, М. Л. Лезгина**. Детерминация научного поиска, Л., 1978; Современный детерминизм и наука, т. 1, сб. под ред. Г. А. Свечникова. Новосибирск, 1975; **Г. Г. Шакарян**. Проблемы детерминации и функционирования философского знания, Ереван, 1982 и др.

³ Մարդու ցանկացած հոգևոր գործունեության հասարակական բնույթի մասին գաղափարն ավելի քան լավ է արտահայտված Կ. Մարքսի հետևյալ բառերում. «...Նույնիսկ այն ժամանակ, երբ ես զբաղված եմ գիտական և նման գործունեությամբ, մի գործունեությամբ, երբ ես միայն հազվադեպ եմ կարող իրականացնել այն ուրիշների հետ անմիջական շփման մեջ, նույնիսկ այդ ժամանակ ես զբաղված եմ հասարակական գործունեությամբ, որովհետև ես գործում եմ որպես մարդ... որի սեփական էջությունը հասարակական գործունեությունն է»: (**К. Маркс, Ф. Энгельс**. Соч., т. 42, с. 118):

⁴ Ժամանակակից բուրժուական փիլիսոփայության մեջ առկա են բազմաթիվ համադրություններ, որոնցում անտեսվում, իսկ երբեմն էլ ուղղակի բացառվում է մարդկային և հասարակական կյանքի միջև եղած դետերմինացիոն կապը: Նման կողմնորոշմանը հարազատ մտածողների թվին կարելի է դասել, օրինակ, Կ. Յասպերսին (տե՛ս **Г. Гиргинов**. Наука и творчество М., 1979, էջ 198): Պրա հետ միասին ավելի առավել ու ավելի մեծ ազդեցություն են ձեռք բերում այն համադրությունները, որոնցում պնդվում է գիտական իմացության գործընթացի և արդյունքների որոշակի կախվածությունը սոցիալական կարգի գործոններից: Այդ համադրությունների հիմք է հանդիսանում գործոնների տեսությունը (տե՛ս, օրինակ, **Т. Кун**. Структура научных революций. М., 1975, էջ 12, 233—235):

դակույթյան և որոշակի սոցիալ-դասակարգային շահերի մեջ, որոնցում դրանք արտահայտվում ու ամրապնդվում են:

Ջանազան փիլիսոփայական գաղափարների ու համարողությունների իր վերլուծության մեջ և այդ կապակցությամբ առաջադրված փաստարկումներում Վ. Ի. Լենինն անփոփոխ ղեկավարվում էր այդ մեթոդաբանական դիրքորոշմամբ, տվյալ մտածողի տեսական կառուցումների ջրհի տակ նշմարում և բացահայտում էր այն խորը դասակարգային շահը, որը պարունակվում էր այդ կառուցումներում, և որին, վերջին հաշվով, դրանք ծառայում էին: Նա իր գաղափարական հակառակորդների հայացքների վերլուծությունը նրբորեն և վարպետորեն հասցնում էր այդ հայացքների սոցիալական արմատների և դրանց օբյեկտիվ հասարակական նշանակության բացահայտմանը⁵: Միաժամանակ Վ. Ի. Լենինը ելնում էր վերջիններիս բացահայտման և գնահատման նկատմամբ զգաստ մոտեցման անհրաժեշտությունից, որը ենթադրում է այն բանի բացասումը, թե ինչումն է տվյալ մտածողը տեսնում իր պնդումների և դրանց օգտին բերված փաստարկների շարժառիթները: «Դժբախտությունն էլ հենց այն է, որ «բարի» դիտավորությունները լավագույն դեպքում մնում են կարպի, Պյոտրի, Սիդորի սուբյեկտիվ գործը, իսկ նմանօրինակ հայտարարությունների հասարակական նշանակությունն անպայմանական է ու անառարկելի և չի կարող թուլացվել որևէ վերապահությամբ ու պարզաբանությամբ⁶: Մեկ այլ տեղում այդ միտքը ընդգծելով, նա նշում է, որ «բարին, բարիքը, բարի ձգտումները մընում են որպես սուբյեկտիվ պիտոյականություն»⁷:

Փիլիսոփայական փաստարկների, ինչպես նաև ցանկացած գաղափարական կազմավորմաների ճշմարտության աստիճանի օբյեկտիվ գնահատականը, ըստ Վ. Ի. Լենինի, անհնարին է տալ բառացի դրանց և որոշ սոցիալ-դասակարգային շահերի կտպի ըմբռնման և առանց այդ կապի բացահայտման հմտության: «Մարդիկ եղել են ու միշտ կմնան քաղաքականության մեջ խաբեության ու ինքնախաբեության հիմար զոհեր. մինչև որ չսովորեն ամեն տեսակի բարոյական, կրոնական, քաղաքական, սոցիալական ֆրագների, հայտարարությունների, խոստումների հետևում որոնել այս կամ այն դասակարգի շահերը»⁸: Լենինյան այս խոսքերը կարելի է լիովին տարածել ոչ միայն քաղաքական գաղափարախոսության, այլև փիլիսոփայության վրա: Չէ՞ որ մեջբերված ասույթում իր մասնավոր արտահայտությունն է ստացել հասարակական կյանքին, այդ թվում նաև հոգևոր ոլորտին պատկանող երևույթների ըմբռնման և գնահատման դասակարգային-կուսակցական մոտեցումը՝ մարքսիստական մեթոդաբանական ընդհանուր սկզբունքը: Պա փիլիսոփայության մեջ հանդես է գալիս որպես փիլիսոփայական գիտելիքի կուսակցականություն սկզբունք, որի մեջ էլ ամփոփվում է այդ գիտելիքի սոցիալական դետերմինացիայի գաղափարը: Ինչպես իրավացիորեն նշում է Թ. Ի. Օլգերմանը, «մարքսիզմը փիլիսոփայության կուսակցականության սկզբունքը հիմնավորում է որպես նրա փոփոխվող սոցիալական բովանդակության հետազոտման գիտական, մեթոդաբանական սկզբունք»⁹:

Փիլիսոփայական գաղափարների ու պատկերացումների, ինչպես նաև նրանց հետ կապված փաստարկման ընթացակարգերի¹⁰ սոցիալական դետերմինացիայի բացահայտման մեթոդաբանական նշանակությունը դառնում է ակնառու, եթե հաշվի է առնվում փիլիսոփայական գիտելիքի՝ որպես այդպիսինի առանձնահատկությունը՝ նրա ավելի սերտ ու անմիջական, քան գիտության, կապը սոցիալական պրակտիկայի հետ: Փիլիսոփայական գիտելիքի այդ առանձնահատկությունը արտահայտվում է իրականության նկատմամբ մարդու տեսական և պրակտիկ հարաբերության «համաձուլման» մեջ, փիլիսոփայության աշխարհայացքային բնույթի բեռը, որի շնորհիվ այն առնչվում է մարդկանց գործնական շահերի հետ և բեկում է դրանց իր բովանդակության մեջ՝ ձեռք բերելով սոցիալական պրակտիկայի վրա ներգործելու ընդունակություն¹¹:

⁵ «Սոցիալական արմատներ» և «հասարակական նշանակություն (ֆունկցիա)» եզրերը այս կոնտեքստում արտահայտում են, մեր կարծիքով, երկու իրար հետ սերտ փոխկապակցված, սակայն, միաժամանակ, «սոցիալական դետերմինանտներ» հասկացության տարբեր ասպեկտները, որոնք օգտագործվում են գաղափարական երևույթների բացատրման և գնահատման գործընթացում:

⁶ Վ. Ի. Լենին, ԵԼԾ, հ. 18, էջ 455:

⁷ Նույն տեղում, հ. 29, էջ 239:

⁸ Նույն տեղում, հ. 23, էջ 54:

⁹ Տե՛ս Թ. Ի. Օլգերման, Главные философские направления, М., 1971, էջ 338:

¹⁰ Տե՛ս Գ. Ա. Брутян, Аргументация, Ереван, 1984, էջ 54:

¹¹ Փիլիսոփայության և հասարակական կյանքի փոխհարաբերության նշված երկկողմանիությունը ճիշտ է նկատվել անգլիացի նշանավոր փիլիսոփա, գիտնական և հասարակական գործիչ Բ. Ռասելի հետևյալ ասույթում. «...Մարդկանց կյանքի հանգամանքները մեծ մասամբ որոշարկում են նրանց փիլիսոփայությունը, և, հակառակը, նրանց փիլիսոփայությունը որոշարկում է այդ հանգամանքները» (տե՛ս Բ. Рассел, История западной философии, М., 1959, էջ 8):

Եթե խոսենք ոչ թե փիլիսոփայական գաղափարների, այլ դրանց փաստարկման (հիմնավորման) մասին, ապա նկատելի է, որ նրա սոցիալական մոտիվացվածությունը, նրանում փաստարկողի սոցիալական դիրքորոշման արտահայտությունը ավելի մեծ չափով է հանդես գալիս: Փիլիսոփայական գաղափարները փաստարկման մեջ և նրա միջոցով ավելի ակնառու ձևով են հատնաբերում իրենց աշխարհայացքային պոտենցիալը և կապը մարդկանց գործնական կյանքի ամենօրյա հրատապ շահերի, նրանց հասարակական պրակտիկայի հետ: Որոշակիորեն կարելի է պնդել, որ փաստարկման ընթացակարգերի միջոցով գաղափարներն իրենք են ընդգրկվում այդ պրակտիկայի կազմի մեջ, քանզի նրանց «հաջողվում է ներդրվել» բազմաթիվ մարդկանց գիտակցության մեջ, դառնալ նրանց սոցիալական գործունեության աշխարհայացքային կողմնորոշիչները: «Փաստարկման յուրահատուկ խնդիրը, — գրում է Մ. Ա. Դանիելյանը, — այս կամ այն տեսակետի պաշտպանումն (հիմնավորում) և կարծիքների պայքարի պայմաններում, որը հաճախ կենսականորեն շատ դժուար է և միշտ սոցիալապես պայմանավորված: Այդ պատճառով էլ փաստարկման տիպը իր մեջ կրում է աշխարհայացքային դիրքորոշում այդ հասկացության ինչպես յուրահատուկ (գաղափարախոսական), այնպես էլ ընդհանուր բովանդակության առումով»¹²:

Փիլիսոփայական իդեալիզմն իր շահազույժ ձևակերպությունների մեջ ենթարկվելով ընտանադատական վերլուծության, Վ. Ի. Լենինը մշտապես ղեկավարվում էր ըննարկվող համադրությունների սոցիալական արմատների և օբյեկտիվ հասարակական նշանակության բացահայտման ձգտմամբ, իդեալիստ մտածողների հայացքների և նրանց կիրառած փաստարկումների մեջ ի հայտ եկող սոցիալ-դասակարգային ուղղվածության վերհանմամբ: Պ. Վ. Կոպիսինը իրավացիորեն նշում է, որ Վ. Ի. Լենինի կողմից իդեալիստական փիլիսոփայական ուսմունքների սոցիալական, դասակարգային շարժառիթների, դետերմինանտների բացահայտումը հանդիսանում է իդեալիզմի նրա ըննադատության պակզը, այդ վերլուծության նախորդ բոլոր պահերի ավարտը և հանգեցումը տրամաբանական ավարտին»¹³:

Իդեալիստական փիլիսոփայական գաղափարների և դրանք հիմնավորող փաստարկների սոցիալ-դասակարգային շարժառիթներն առավել ակնառու են արտահայտված սոցիալ-փիլիսոփայական համադրություններում: Ահա թե ինչու մախիզմի և նրա զանազան տարբերակների վերլուծության մեջ Վ. Ի. Լենինը տվյալ փիլիսոփայական հոսանքի սոցիալական դետերմինանտները բացահայտում է դրա ներկայացուցիչների գլխավորապես սոցիոլոգիական հայացքների հիման վրա: Այս կապակցությամբ հատկանշական է Վ. Ի. Լենինի փաստարկումն ընդդեմ Պետցոլդի այն համադրության, որի համաձայն ինչպես ողջ հասարակության, այնպես էլ յուրաքանչյուր առանձին ինդիվիդի կյանքը և գործունեությունը որոշվում են բնությունից ներքանց մեջ դեպի կայուն վիճակ ներդրված ինչ-որ ներքին ձգտման մեջ: Պետցոլդի կողմից կանխադրված այդ կայունության համադրությամբ ընկած էր սոցիոլոգիայի բնագավառում նրա բոլոր տեսական կառուցումների, էթիկայի, էսթետիկայի, քաղաքատնտեսության և, նույնիսկ, իմացության տեսության հիմքում: Նշված յուրաքանչյուր բնագավառում այդ սկզբունքն արտահայտվում է այս կամ այն կոնկրետ ձևով: Եթե իմացության տեսության մեջ այն հանդես է գալիս «մտածողության տնտեսման» տխրահռչակ սկզբունքի ձևով, ապա, օրինակ, էթիկայի գիտելիքների տիրույթում այն արտահայտվում է մարդու կողմից մեկ ուրիշի նկատմամբ կարեկցանքի մեջ: Մարդու էության վերաբերյալ նման վերացական դատողություններով և իբրև թե նրան ի սկզբանե բնորոշ կայունության ձգտման մեջ թաքնված է մարդու և հասարակության բնույթին օտար դասակարգային պայքարը «օրենքից դուրս» դնելու Պետցոլդի ձգտման փորձը: Միաժամանակ դա նշանակում է գեղեցիկ և գիտականակերպ բառերի թողի տակ անցկացնել դասակարգերի համագործակցության և դասակարգային շահերի հարմոնիայի գաղափարը: Խլացնել, կոծկել պրոլետարիատի և բուրժուազիայի շահերի այն հակասությունը, որը, մարքսիզմի համաձայն, բնականորեն բխում է կապիտալիստական հասարակության բնույթից:

Հետևողականորեն բացահայտելով գերմանական էմպիրիոկրիտիկների սոցիոլոգիական հայացքների դասակարգային ենթատեսուտը, Վ. Ի. Լենինն այդ հայացքները եզրափակում է հետևյալ ամրագրումով. «Զարգենու անսահման բթամտություն, քաղքենի, որն ինքնագոհությամբ հրամայում է հնոտի՝ ջողարկելով այն «նոր», «էմպիրիոկրիտիկական» սխտեմավորումով ու տերմինաբանությամբ, ահա թե ինչի են հանգում Բլախի, Պետցոլդի, Մախի սոցիոլոգիական էքսկուրսները»¹⁴:

Վ. Ի. Լենինը ցույց է տալիս, որ մանրբուրժուական սոցիալական դիրքորոշումը, հետադիմական քաղքենիության հետ մեկտեղ գծագրում է մախիստների տեսական մտածողությունն ամբողջությամբ՝ փիլիսոփայական մտահայեցման ինչպիսի ոլորտի վրա էլ դրանք տարածելիս

¹² М. С. Даннелян. Социальные аспекты аргументации.—В кн.: Философские проблемы аргументации. Тезисы докладов, Ереван, 1984, с. 206.

¹³ ՏՃ՝ Ս. Բ. Կոպին. Диалектика. Логика. Наука, М., 1973, էջ 64:

¹⁴ Վ. Ի. Լենին, ԵԼԾ, հ. 18, էջ 422—423:

լինեն: Ընդ որում, այդ մտածողության նման արտաքին արտահայտությունը, այսինքն՝ մախիստների կողմից իրենց գաղափարների փաստարկումների բնույթը և եղանակները միասնական են թե իմացաբանական, թե սոցիոլոգիական հարցերի ջննարկման գործընթացում: Այդ եղանակները մախիստների փաստարկումների նախշակադապարները փաստարկվող գաղափարների հետադիմական սոցիալական նպատակների ջողարկման, դիմակավորման միջոցներ են: Նշելով մախիստների հայացքների փաստարկումների ձևերի և բովանդակության միջև եղած համապատասխանությունը՝ Վ. Ի. Լենինն այդ համապատասխանության պատճառը տեսնում էր սոցիալ-դասակարգային միասնական «պայացարմի» մեջ, որի վրա հիմնվում է մախիստների փիլիսոփայական աշխարհայացքը ամբողջությամբ: «Բառական աչքակապությունների հավակնոտ պատմուճան, սիլլոգիստիկայի բնագրուսիկ խորամանկություններ, նրբին սխոլաստիկա՝ մի խոսքով, նույնը և իմացաբանության մեջ, և սոցիոլոգիայի մեջ, նույն ռեակցիոն բովանդակությունը, նույնպիսի ծջան ցուցանակի հետևում»¹⁵: Արտասահմանյան, ինչպես նաև ռուսական մախիստների (Բոգդանով, Սովոլորով և այլոք) փիլիսոփայական համադրությունների լինադատության գործընթացում Վ. Ի. Լենինը ցույց տվեց, որ փիլիսոփայական երկու հիմնական ուղղություններից, կուսակցություններից՝ մատերիալիզմից և իդեալիզմից, վեր կանգնելու մախիստների ձգտումը մանր բուրժուազիայի սոցիալական դիրքի հակասականության արտացոլումն է, որի տնտեսական շահերը պարտադրում են անսկզբունքորեն տատանվել կապիտալիստական հասարակության երկու հիմնական դասակարգերի՝ բուրժուազիայի և պրոլետարիատի միջև: Այդ միջանկյալ դրությունն է պայմանավորում մանր բուրժուազիայի գաղափարախոսներին բնորոշ ձգտումը՝ քարծր զարգացած կապիտալիզմի դարաշրջանի ավելի ու ավելի սրացող դասակարգային հակասությունների հետ հաշտվելը, իսկ փիլիսոփայության բնագավառում՝ փաստարկման զանազան «խորամանկությունների» միջոցով մատերիալիզմի և իդեալիզմի հաշտեցումը:

Վերլուծվող իդեալիստական փիլիսոփայական համադրությունների սոցիալական դետերմինանտների բացահայտման լենինյան փաստարկումը սերտորեն կապված է նրանց իմացաբանական դետերմինանտների պարզաբանման հետ: Մարդկային իմացության սոցիալական և իմացաբանական դետերմինանտների փոխկապվածության գաղափարը ընկած է փիլիսոփայական իդեալիզմի տարբեր դրսևորումների լենինյան վերլուծության հիմքում: Ձևակերպելով այդ միտքը, էքսպլիցիտ տեսքով, Վ. Ի. Լենինը գրում էր. «Մարդու ճանաչողությունը ուղիղ գիծ չէ... այլ կոր գիծ է, որն անվերջ մոտենում է շրջանների շարքին, պարուրին: Այդ կոր գծի ամեն մի հատվածը, բեկորը, կտորը կարող է դարձվել (միակողմանիորեն դարձվել) ինքնուրույն, ամբողջական, ուղիղ գիծ, որը (թեթե ծառերի հետևում չտեսնեն անտառը) այդ ծածանակ տանում է դեպի ծափիճ, դեպի տերտերականություն (որտեղ նրան ամրապնդում է տիրապետող դասակարգերի դասակարգափն շահը»¹⁶:

Փիլիսոփայության բնագավառում (որքանով այն մարդկային իմացության ոլորտներից մեկն է և ունի իր իմանեստ տրամաբանությունը) համապատասխան գաղափարների և պատկերացումների ձևավորման և գործառնության սոցիալական դետերմինանտները իրացվում են՝ միջնորդավորվելով իմացաբանական կարգի դետերմինանտներով: Այդուհանդերձ հիմք կա նաև պնդելու, որ այդ երկու կարգի դետերմինանտներից առաջինները (սոցիալական դետերմինանտները) առաջնակարգ նշանակություն ունեն, քանի որ դրանք հանդես են գալիս պատմափիլիսոփայական գործընթացի որոշիչ շարժիչ գործոնների դերում: Այս հանգամանքն է իրավացիորեն նշում Լ. Գ. Շաքարյանը. «Փիլիսոփայական մտքի էվոլյուցիայի համար անհրաժեշտ են ոչ այնքան իմացաբանական, որքան սոցիալական շարժառիթներ»¹⁷: Պատմափիլիսոփայական երևույթների վերլուծության լենինյան մեթոդի սկզբունքային տարբերությունը որոշ կենդ-մարքսիստների գոեհիկ-ս-ցիոլոգիական մեթոդներից այն է, որ փիլիսոփայական այս կամ այն հայացքների սոցիալ-դասակարգային դետերմինանտների բացահայտումը լենինյան փաստարկման մեջ իրականացվում է ոչ թե ուղղակիորեն, ոչ թե «ճակատային գրոհով», այլ փիլիսոփայական իմացության վրա ունեցած նշված սոցիալական գործոնների միջնորդավորված ազդեցության բնույթի հաշվառմամբ և, մասնավորապես, հաշվի առնելով դրանց միջնորդավորվածությունը իմացաբանական գործոններով:

Հասարակական (այդ թվում՝ փիլիսոփայական) իմացության սոցիալական դետերմինացիայի իրականացման հակադիալեկտիկական եղանակի տիպական օրինակ կարող է ծառայել ժամանակակից բուրժուական փիլիսոփայության «իմացության սոցիոլոգիա» անվանվող ուսմունքը: Այդ հոսանքի ներկայացուցիչների կողմից ցանկացած հասարակական գիտական (մասնավորապես սոցիալ-փիլիսոփայական) տեսությունների սոցիալ-դասակարգային պայմանավոր-

¹⁵ Նույն տեղում, էջ 423:

¹⁶ Նույն տեղում, հ. 29, էջ 392:

¹⁷ Գ. Գ. Шакарян, Проблемы детерминации и функционирования философского знания, с. 34.

վածության ընդունումը օգտագործում է դրանցում ամեն մի իմացաբանական բովանդակության դուրս մղման, նրանց մեջ օբյեկտիվ-ճանաչողական պահերի բացասման պայմանով, անկախ այն բանից, թե ինչպիսին են այդ տեսությունների սոցիալական արմատները:

Ի հակադրություն նման հայացքների ու պատկերացումների, մարքսիսմ-լենինիզմը ելնում է այն բանից, որ ցանկացած տեսական-գաղափարական «կառուցումներում», որքանով դրանք այսպես, թե այնպես «պատկերում են» իրականությունը (այդ թվում և սոցիալական իրակա-նությունը), անկա է օբյեկտիվ-ճանաչողական սկիզբը, սակայն զանազան կոնցեպտուալ հա-մակարգերում այդ պատկերման աստիճանը և բնույթը տարբեր է՝ նայած այն բանին, թե ինչ-պիսի սոցիալ-դասակարգային գործոններ են դետերմինավորում դա: Այս դիրքերից գնահատե-լով ժամանակակից բուրժուական փիլիսոփայությունը, Ա. Ս. Բոգոմոլովը, Յու. Կ. Մելյուիլը և Ի. Ս. Նարոսկին նշում են, որ սխալ կլինի այն համարել «մաքուր գաղափարախոսություն», ի-րականության վերաբերյալ խեղաթյուրված պատկերացումների ամբողջություն, դոգմա, խաբեու-թյան և ինքնախաբեության ֆունկցիաներ իրականացնող, որի միակ «նպատակը տիրող դա-սակարգերի շահերի պաշտպանությունն է»: Ժամանակակից բուրժուական փիլիսոփայությունը, մատնանշում են նրանք, «հենվում է սոցիալական պրակտիկայի, հասարակական կյանքի իրա-կան փաստերի վրա և ստիպված է ինչ-որ չափով հաշվի նստել գիտության հետ»¹⁸:

Օբյեկտիվ ճանաչողական սկիզբը արտահայտվում է առավելապես այն տեսական-փիլիսո-փայական համադրույթներում, որոնցում բեկվում է «ամրապնդվում են» դասակարգի շահերը, որն իրենով մարմնավորում է տվյալ պատմական դարաշրջանի հասարակական առաջադիմու-թյունը: Մարքս-լենինյան փիլիսոփայության ճշմարտությունը, գիտական օբյեկտիվությունը ա-պահովվում է հենց նրանով, որ այն իր տեսական, պատմական ու սոցիալական ակունքներում եղել և այսօր էլ մնում է ժամանակակից դարաշրջանի ամենաառաջավոր ուժերի աշխարհա-յացքի արտահայտությունը:

Փիլիսոփայական իմացության բովանդակության մեջ սոցիալ-դասակարգային շահերի փո-խակերպումը իրականացվում է այն երկու ուղղությունների՝ մատերիալիզմի և իդեալիզմի, բա-ժանելու շնորհիվ: Որևէ փիլիսոփայական համադրույթի պատկանելիությունն այդ ուղղություն-ներից մեկին կամ մյուսին արդեն նշանակալից չափով հնարավորություն է ընձեռում դատել այն մասին, թե ինչպիսի սոցիալական ուժերի՝ առաջավոր թե հետադիմական, շահերը և աշ-խարհայացքն է այդ համադրույթը արտահայտում: Չէ՞ որ փիլիսոփայական իդեալիզմը (ինչ-պես դա տակավին ապացուցել է Լ. Ֆոլերբախը) խորապես հարգալու է կրոնին, իսկ վեո-չինս միշտ եղել է, ըստ էության, այսօր էլ մնում է մասսաներին հոգևոր ստրկացման և շահա-գործման հզոր զենք տիրապետող դասակարգերի շահերի համար, ծառայել է զանազան պատ-մական շնեղով հանդես եկած շահագործողական հասարակարգերի հավերժացման խնդիրներին: Ահա թե ինչու արտասահմանյան և ուսական մախիստների փիլիսոփայական համադրույթների քննարկման գործընթացում, այդ համադրույթների դեմ առաջադրած իր փաստարկումների շղո-թայում Կ. Ի. Լենինը սկսում է այն բանի ապացուցումից, որ չնայած մախիստների բառային խորամանկություններին և նրանց հայացքների՝ «գիտական նորագույն տվյալներով» հիմա-վորված լինելու հավակնություններին, այդ հայացքները եպիսկոպոս Բերկլու սուբյեկտիվ-իդեա-լիստական ուսմունքից արված կաղապարումներ են:

Այն բանի հիմնավորումը, թե մախիզմը փիլիսոփայական իդեալիզմի տարատեսակներից է, այսինքն՝ պատկանում է փիլիսոփայական կուսակցություններից մեկին, Կ. Ի. Լենինի փա-ստարկման մեջ ելակետ է ծառայում այդ փիլիսոփայական հոսանքի սոցիալ-դասակարգային դետերմինանտները բացահայտելու գործընթացում: Հաշվի առնելով, որ մատերիալիզմը և ի-դեալիզմը նախ և առաջ փիլիսոփայական համադրույթների իմացաբանական բովանդակության բնութագրություններ են, կարելի է պնդել, որ մախիզմի լենինյան վերլուծությունը (Ռևոլուցիոնար նաև այդ առթիվ օգտագործված փաստարկումը) ծավալվում է այդ հայացքների իմացաբանա-կան դետերմինանտներից (և փաստարկումներից) դեպի դրանց սոցիալական դետերմինանտնե-րը ընթանալու ուղիով: Այդ անցման տրամաբանությանը համապատասխանում է նաև մա-խիստների հայացքների ուսումնասիրման հաջորդականությունը՝ սկզբում իմացաբանական պրոբ-լեմների շրջանակներում, իսկ այնուհետև՝ սոցիոլոգիական: Այդպիսի ուսումնասիրման ար-դյունք է, Կ. Ի. Լենինի խոսքերով ասած, «այն եզրակացությունը, որ ռեակցիոն իմացաբանու-թյունն անխզելիորեն կապված է սոցիոլոգիայի մեջ արվող ռեակցիոն ճիգերի հետ»¹⁹:

Եթե մախիզմի վերլուծության հետ կապված Կ. Ի. Լենինի փաստարկման շղթայի նախնա-կան օղակի դերում հանդես է գալիս մախիստների իմացաբանական հայացքների սուբյեկտիվ իդեալիզմին պատկանելու ապացուցումը, ապա այդ նույն փաստարկման հաջորդ օղակը կազ-

¹⁸ А. С. Богомолов, Ю. К. Мельвиль, И. С. Нарский. О некоторых особенностях критического анализа современной буржуазной философии.—Вопросы философии, 1967, № 9, с. 121.

¹⁹ Կ. Ի. Լենին, ԵԼԺ, հ. 18, էջ 441:

մում է այդ հայացքների հետադիմական բնույթի ցուցադրումը, կրոնին և տերտերականությանը, որպես հասարակության հոգևոր կյանքի ոլորտում ռեակցիայի արտահայտության, աջակցելու մերկացումը: Իմացաբանության մի շարք հիմնային պրոբլեմների կապակցությամբ մախիստների առաջադրած փաստարկների եզրաբանական գիտականակերպության շղարշը պատռելով, Վ. Ի. Լենինը համոզիչ կերպով ցույց տվեց, որ այդ «իմացաբանական խորամանկությունների օբյեկտիվ դերը մեկն է և միայն մեկը՝ ճանապարհի հարթելի իդեալիզմի և ֆիդեիզմի համառ, հավատարմաբար ծառայել նրանց»²⁰: Կարելի է պնդել, որ Լենինյան փաստարկման հենց այս օղակում է նախատեսվում **անմիջական անցումը** վերլուծիկ փիլիսոփայական համադրությունների իմացաբանական բովանդակությունից (և համապատասխան դետերմինանտներից) դեպի նրանց սոցիալ-դասակարգային բովանդակության (դետերմինանտների) վերհանումն ու բնութագրությունը: Չպետք է կարծիք, թե Վ. Ի. Լենինն իր փաստարկողական վերլուծության մեջ, հետեւելով տարբեր դետերմինանտների բացահայտման նկարագրված հաջորդականությանը, եւնում էր փիլիսոփայական համադրությունների դետերմինացիայում սոցիալական դետերմինանտների նկատմամբ իմացաբանական դետերմինանտների առաջնայնությունից: Անշուշտ, ոչ: Այդ կապակցությամբ նշենք, որ ինքը՝ փաստարկումը, փիլիսոփայական իմացության, հետազոտության որոշակի եղանակ է, որի շնորհիվ արդեն ձեռքբերված, ձևակերպված գիտելիքները և պատկերացումները ծառայում են նոր գիտելիքների հայտնագործման, ձևավորման գործընթացին: Այլ խոսքով, փիլիսոփայական փաստարկումը նաև հետազոտական գործունեության որոշակի տեսակ է: Եվ քանի որ դա այդպես է, ապա այստեղ ևս, ինչպես ամեն մի հետազոտական գործունեության մեջ, ոչ միայն թույլատրելի է, այլև արտահայտված է երբեմն այս կամ այն օբյեկտի վերլուծության տրամաբանական մեթոդի նախընտրությունը պատմական մեթոդից: «Մատերիալիզմ և էմպիրիոկրիտիցիզմ» աշխատության մեջ Վ. Ի. Լենինի փաստարկման «կառուցումը» վկայում է հենց նման նախընտրության մասին, այլ ոչ թե նրա այն համոզմունքի մասին, թե փիլիսոփայական համադրությունների իմացաբանական դետերմինանտներն առաջնային են սոցիալական դետերմինանտների նկատմամբ:

Փիլիսոփայական համակարգերի ձևավորման և գործառնության ռեալ պատմական գործընթացում այդ երկու տեսակի դետերմինանտները գտնվում են սերտ փոխկապակցության և փոխազդեցության մեջ: Անտարակույս է, որ Վ. Ի. Լենինը հաշվի էր առնում այս կարևոր հանգամանքը, նշելով ինչպես փիլիսոփայական համակարգերի իմացաբանական բնութագրիչների որոշարկվածությունը սոցիալական դետերմինանտներով, այնպես էլ հակառակը: Ընկալելով լավ լուսաբանում կարող եմ ծառայել Վ. Ի. Լենինի վերջնական եզրակացությունները Էմպիրիոկրիտիցիզմի եության մասին, որոնցով նա ավարտում է իր հիմնական փիլիսոփայական երկը: Բերենք երկու օրինակ, որոնցից մեկում նշվում է (որոշ պայմանականությամբ արտահայտված) «սոցիալականի ձևափոխումը իմացաբանականի», իսկ մյուսում հակառակը՝ «իմացաբանականի ձևափոխումը սոցիալականի»: «...Էմպիրիոկրիտիցիզմի իմացաբանական սխոլաստիկայի հետևում, — գրում է նա, — չի կարելի չտեսնել կուսակցությունների պայքարը փիլիսոփայության մեջ, մի պայքար. որ վերջին հաշվով արտահայտում է ժամանակակից հասարակության թշնամական դասակարգերի տենդենցներն ու գաղափարախոսությունը»²¹: Ինչպես երևում է, այստեղ մատնանշվում են մտածողի (որպես այս կամ այն փիլիսոփայական տեսության, գաղափարի, համադրույթի հեղինակի) ընդհանուր փիլիսոփայական դիրքերի ձևավորման սոցիալ-դասակարգային գործոնները, նրա ընտրությունը մատերիալիզմի և իդեալիզմի միջև: Մի քանի տող ներքև Վ. Ի. Լենինը ձևակերպում է իդեալիզմին առհասարակ վեոաբերող մեկ այլ եզրակացություն, որտեղ ամփոփված է հակառակ տենդենցը բնութագրող միտք, որի հունի մեջ փիլիսոփայական տեսության որոշակի իմացաբանական բովանդակությունը նախատեսում է նրա սոցիալական նշանակությունը, հասարակական պրակտիկայի վրա ներգործության նրա բնույթը և ուղղվածությունը, սոցիալական ուժերի և հաստատությունների հետ գոյություն ունեցող նրա որոշակի առնչությունները: Իդեալիզմը, նշում է նա, «ֆիդեիզմի միայն նրբագրած, զտված ձևն է, իսկ ֆիդեիզմը կանգնած է սպառազեն, իր տրամադրության տակ ունի ահագին կազմակերպություններ և շարունակում է անշեղորեն ներգործել մասսաների վրա՝ իր օգտին ծառայեցնելով փիլիսոփայական մտքի չնչին տատանումն իսկ»²²: Ի մի բերելով Լենինից մեջբերված առույթները, դժվար չէ նկատել, որ փիլիսոփայական տեսությունների իմացաբանական և սոցիալական դետերմինանտների միասնության և փոխկապակցության շրջանակներում առաջատար դերո պատկանում է երկրորդներին: Չէ՞ որ միավորելով վեոնում առանձնացված «սոցիալական-իմացաբանական» և «իմացաբանական-սոցիալական» դետերմինանտային օղակները՝ մենք լուրաբանջնյուր շրջանի սկզբում և վերջում բացահայտում ենք հենց սոցիալական գործոնները: Մի դեպքում, ինչպես նշել էինք ավելի վաղ, այդ գործոնները հանդես են գալիս փիլի-

²⁰ Նույն տեղում, էջ 450:

²¹ Նույն տեղում, էջ 471:

²² Նույն տեղում, էջ 471—477:

սոփիական տեսությունների «սոցիալական արմատների» դերում, մյուս դեպքում՝ թե ինչն է դետերմինավորում նրանց հասարակական նշանակությունը, նրանց նշանակությունը հասարակական կյանքում:

Փիլիսոփայական համադրությունների իմացաբանական դետերմինանտների նկատմամբ սոցիալական դետերմինանտների առաջնայնության գաղափարը բավականաչափ համոզիչ կարող է հիմնավորվել՝ հենվելով մարքս-լենինյան փիլիսոփայության այն ֆունդամենտալ դրույթի վրա, որի համաձայն մարդկային իմացության հիմքը և չափանիշը հասարակական պրակտիկան է: Հասկանալի է, որ այս դրույթի ճշմարտությունն ամբողջապես տարածվում է նաև փիլիսոփայական իմացության վրա, այդ թվում նաև նրա այնպիսի կարևորագույն բաղկացուցիչ տարրի վրա, ինչպիսին փաստարկումն է: Պարզ է և այն, որ փիլիսոփայական գաղափարների և ներանոս օգտին առաջադրած փաստարկումների իմացաբանական բովանդակության և «արժանուսպատվության» (ճշմարտության կամ կեղծության) գնահատականը չի կարող իրականացվել առանց հաշվի առնելու այդ գաղափարների և փաստարկների ձևավորման ու գործառնության պրակտիկ-սոցիալական կոնտեքստը: Իմացության և պրակտիկայի նման միասնության ըմբռնման Հեգելի մոտեցումը Վ. Ի. Լենինը գնահատում էր որպես նրա փիլիսոփայության կարևորագույն դրական պահերից մեկը. «...«Գաղափարին» որպես հասկացության համընկմանը օբյեկտի հետ, գաղափարին որպես ճշմարտության Հեգելը մոտենում է մարդու պրակտիկ, նպատակահարմար գործունեության միջոցով: Անդուսպ մոտեցում այն բանին, որ մարդն իր պրակտիկայով է ապացուցում իր գաղափարների, հասկացությունների, գիտելիքների, գիտության օբյեկտիվ ճշտությունը»²³: Վ. Ի. Լենինը առաջնորդվում էր ոչ միայն գաղափարական հակառակորդների հայացքների և փաստարկների սոցիալ-իմացաբանական դետերմինանտների հստակ գիտակցմամբ, այլև նույն մեթոդաբանական սկզբունքով էր ղեկավարվում իր սեփական գաղափարների առաջադրման ու օգտագործման գործընթացում: Նա բազմիցս նշում էր մարքսիզմի փիլիսոփայական և սոցիալական տեսությունների անջակտելի կապը պրոլետարիատի շահերի ու հեղափոխական պայքարի հետ: Միաժամանակ Վ. Ի. Լենինը համոզված էր, որ այդ տեսության շրջանակներում առաջադրած գաղափարների և դրույթների (հետևաբար նաև դրանց օգտին բերված փաստարկների ու փաստարկումների) ճշմարտության հաստատման ամենահուսալի միջոցը դրանց ստուգումն է գործով: «Մեր տեսական հայացքների կոչվածությունը մեր հեղափոխական գործունեության ղեկավարումն է,—աօում էր նա:—Մեր տեսական հայացքների ստուգման լավագույն տեղը մարտական գործունեության դաշտն է: Կոմունիստի իսկական ստուգումը նրա կողմից այն բանի ըմբռնումն է, թե ինչպես, որտեղ և երբ նա պետք է իրագործի իր մարքսիզմը»²⁴: Վ. Ի. Լենինի գաղափարական վեճերը մարքսիզմին օտար համարույթների հեղինակների հետ, նրա լայնահուն պրոպագանդիստական ու իրապարակախոսական գործունեությունը՝ ուղղված գանգվածների մեջ պրոլետարական գաղափարախոսության և գիտամատերիալիստական աշխարհայացքի տարածմանը, ինքնըստինքյան արդեն հանդես են գալիս որպես մարքսիզմը գործողության փոխակերպելու վառ օրինակներ: Չէ՞ որ սոցիալական պրակտիկայի վրա ցանկացած տեսության ներգործության նախնական անհրաժեշտ պայմանը նրա կողմից մարդկանց լայն գանգվածների մտքերի նվաճումն է: Հենց մտքերի ու սրտերի նվաճման այդպիսի խնդիրների, մարքսիստական տեսության և նրա կողմից առաջադրված հեղափոխական-պրակտիկ գործունեության կողմնորոշիչների իրականացման ու ամրապնդման օգտին է ծառայել և շարունակում է ծառայել փիլիսոփայական լենինյան փաստարկումը: Սա էլ հիմք է տալիս խոսել այդ փաստարկման ափսոսանքալից դետերմինացվածության մասին:

Անդրադառնալով փիլիսոփայական համադրությունների սոցիալական և իմացաբանական դետերմինանտների հարաբերակցության հարցին, հարկավոր է նշել ևս մի կարևոր հանգամանք, որը վերաբերում է «իմացաբանական դետերմինանտներ» հասկացության բովանդակությանը: Ինչպես և «սոցիալական դետերմինանտներ» հասկացության մեջ, այստեղ ևս կարելի է սուսանձանցանել իմաստային երկու նրբերանգներ՝ «իմացաբանական արմատ» և «իմացաբանական հնարավորություն»: Հ. Ծաքարյանը, որին պատկանում է այդ նրբերանգների տարբերակման գաղափարը, նշում է, որ փիլիսոփայական տեսությունների առաջադրման իմացաբանական հնարավորությունները որպես պոտենցիա առկա են մարդկային իմացության բարդ օրգանիզմի անվերջ «կենդանի ծառի» վրա: «Իմացաբանական արմատը, որպես այդպիսին, ավելին է, քան հնարավորությունը,— գրում է նա: Այն նախորդ ճշմարտության բացարձականացումն է, սուբյեկտիվորեն ուղծացումը, իր հակադրության փոխարկումը»²⁵: Այդ հասկացությունը հենց այս

²³ Նույն տեղում, հ. 29, էջ 209:

²⁴ *Տե՛ս* Ленинский сборник. XXXVII, М., 1970, էջ 249:

²⁵ Г. Г. Шакарян, Проблемы детерминации и функционирования философского знания, с. 30.

իմաստով է օգտագործում Վ. Ի. Լենինը, որպես իդեալիզմի իմացաբանական արմատ, Նշելով իմացության որևէ «գիծիկի» բացարձականացումը, «ուղղագծությունը», «միակողմանիությունը», «փայտայնությունը», «ոսկրացածությունը», «սուբյեկտիվիզմը» և «սուբյեկտիվ կուրությունը»: Այդպիսով, «իմացաբանական արմատ» հասկացությունն իր մեջ թաքցնում է որոշակի նեգատիվ իմաստ, բնութագրում է մարդու ծանաչողական գործունեության մի քանի «թերությունները»: Ի տարբերություն սրա, «իմացաբանական հնարավորությունը» արժեքային տեսանկյունից չեզոք է և կոչված է բնութագրելու իմացության նախորդ պատմությամբ նախապատրաստված «հողը», մարդկային ծանաչողության ձեռքբերված այն մակարդակը, վիճակը, որի հիմքի վրա կարող է և պետք է տեղի ունենա նրա հետագա զարգացումը: Պատմական որոշակի ժամանակաշրջանում, գիտության և փիլիսոփայության մեջ օբյեկտիվորեն ստեղծված իրադրությամբ առաջադրված նույնացման իմացաբանական հնարավորությունների հողի վրա կարող են ծագել և գործառնել սկզբունքորեն տարբեր փիլիսոփայական համադրություններ: Ընդ որում, երբ այդ հնարավորությունն առաջացնում է իդեալիստական և մետաֆիզիկական բնույթի համադրություններ, ապա անվարան կարելի է արձանագրել այդ համադրությունների որոշակի իմացաբանական հնարավորությունները իմացաբանական արմատների փոխակերպման փաստը: Սակայն նման փոխակերպման իրականացման համար անպայմանորեն անհրաժեշտ են սոցիալական կարգի գործոնների ակտիվ «մասնակցությունը», որոնք տվյալ մտածողին նախատրամադրում են իդեալիստական և մետաֆիզիկական փիլիսոփայական կողմնորոշիչների ընդունմանը:

Ամփոփելով ասվածը՝ կարելի է եզրափակել, որ լենինյան փիլիսոփայական փաստարկման մեջ փիլիսոփայական համադրությունների սոցիալական և իմացաբանական դետերմինանտների վերհանումը իրականացվում է այդ երկու տիպի դետերմինանտների սերտ կապի, փոխազդեցության ընդունման և առաջինների առաջատար դերի հստակ գիտակցման հիմքի վրա:

В. Х. МИНАСЯН—О ленинском понимании детерминации философской аргументации.— Положение о том, что глубинным источником порождения и изменения любых идей и представлений, когда-либо разделявшихся или разделяемых людьми, являются объективные, материальные условия их социальной жизнедеятельности, представляет собой сердцевину историко-материалистического детерминизма в понимании всего духовного «сегмента» общественной жизни. Этот принцип в объяснении идеологических явлений и процессов нашел свое разностороннее выражение и в ленинской философской аргументации, общую суть которой в рассматриваемой области можно выразить следующим образом: это принцип, обязывающий выявлять социальные детерминанты возникновения и функционирования любых (в т. ч. философских) идейных образований. В сфере философии (когда скоро она представляет собой отрасль человеческого познания, а это последнее имеет свою имманентную логику) социальные детерминанты формирования и функционирования соответствующих идей и представлений реализуются, опосредуясь детерминантами гносеологического порядка.